
ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ 13-ՐԴ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում (ՀԱԻ) արդեն ավանդական են դարձել արտասահմանցի մասնագետների ակտիվ մասնակցությամբ իրականացվող երիտասարդական գիտաժողովներն ու սեմինարները: Դեկտեմբերի 15-ին և 16-ին ինստիտուտում կայացավ ինստիտուտի երիտասարդ գիտնականների հերթական՝ 13-րդ գիտաժողովը:

Գիտաժողովին ներկայացվեցին 21 զեկուցումներ հայաստանցի և արտասահմանցի մասնագետների կողմից: Հնագիտության և ազգագրության ինստիտուտից ներկայացվեց 11 զեկուցում, հայաստանյան գիտահետազոտական և գիտակրթական այլ հիմնարկություններից՝ 3 զեկուցում և արտերկրից՝ 6 զեկուցում:

Գիտաժողովի սկզբում բացման խոսքով հանդես եկան ինստիտուտի Երիտասարդ գիտնականների խորհրդի (ԵԳԽ) նախագահ Ռոման Հովսեփյանը և տնօրեն Պավել Ավետիսյանը: Ռ. Հովսեփյանն ասաց, որ գիտաժողովի մասնակից երիտասարդների մեծ մասը միասին աշխատում են դաշտում, լաբորատորիաներում և անգամ համագործակցում են որոշակի ծրագրերի շրջանակներում, սակայն մասնագիտացումների զգալի տարբերությունների պատճառով հաճախ բավականաչափ տեղեկացված չեն գործընկերների աշխատանքների մանրամասներին: Նա նշեց, որ գիտաժողովի նպատակն է լուծել այդ խնդիրը՝ երիտասարդ մասնագետներին հնարավորություն տալով ծանոթանալ միմյանց աշխատանքներին, ներկա և անցյալ դարաշրջանների մարդկային հասարակությունների ուսումնասիրության գործում ներկայումս կիրառվող տարբեր մոտեցումներին ու մեթոդներին: Գիտաժողովը թեմատիկ էր և կազմված էր երկու մասից: Գիտաժողովի հնագիտությանը և հարակից գիտություններին առնչվող մասը կայացավ գիտաժողովի առաջին օրը՝ «Նոր մոտեցումներ և տվյալներ Հարավային Կովկասի բրոնզեդարի ուսումնասիրության ոլորտում» խորագրի ներքո: Այստեղ 11 մասնակիցներից 5-ը արտերկրից էին՝ ԱՄՆ-ից, Վրաստանից ու Ֆրանսիայից:

Ներկայացվեցին զեկուցումներ՝ հետևյալ թեմաներով. Ռոման Հովսեփյան (ՀԱԻ, Հնակենսաբանության խումբ)՝ «Բրոնզեդարյան բուսաբուծությունը Հարավային Կովկասում. ուսումնասիրության հնարասարանական մեթոդը», Աննա Խեչոյան (ՀԱԻ, Վաղ հնագիտության բաժին)՝ «Հայաստանում ժայռապատկերների ուսումնասիրության խնդիրները և նոր մեթոդաբանական մոտեցումները», Ինեսսա Հովսեփյան (ՀԱԻ, Վաղ հնագիտության բաժին)՝ «Պետրոգրաֆիական անալիզի կիրառումը Հայաստանի վաղբրոնզեդարյան խեցեղենի ուսումնասիրության մեջ», Աննա Ազիզյան (Էրեբունի պատմական և հնագիտական թանգարան-արգելոց)՝ «Կուր-արաքսյան խեցե-

դեմի զարդարման հիմնական եղանակների շուրջ», Մամվել Հարությունյան (*Փարիզ-Սորբոնի համալսարան*)՝ «Գեղարտի կուր-արաքսյան խեցեղենի դասակարգման փորձ մշակութային համատեքստում», Հարություն Վանյան, Ռուբեն Դավթյան, Մարիամ Ամիրյան, Հասմիկ Սիմոնյան, Հենրիկ Դանիելյան (*ՀԱԻ և ԵՊՀ պատմության ֆակուլտետ*)՝ «Նորարակի - 1 դամբանաբլրի պեղումները, 2012 թ.», Հասմիկ Սիմոնյան, Մարիամ Ամիրյան՝ «Մապատավոր մարդը»՝ ըստ *Նորարակի -1 դամբանաբլրի հնամարդաբանական նյութի*», Դիմիտրի Նարիմանիշվիլի (*Կլդեկարի պատմական-ճարտարապետական թանգարան-արգելոց*)՝ «Մեզալիթ կառույցները և դրանց ուսումնասիրության հեռանկարները», Քեթեվան Թամազաշվիլի (*Իվ. Ջավախիշվիլի անվ. Թբիլիսիի պետական համալսարան*)՝ «Միջին բրոնզեդարյան դամբարան Ծինծկարոյից», Ալան Գրին (*Չիկագոյի Համալսարանի Մարդաբանության բաժին, ԱՄՆ*)՝ «Ծաղկահովտի հարթավայրի ուջբրոնզեդարյան խեցեղենի շարժական ռենտգենային ֆլուորեսցենցիա և սինխրոտրոնային ռենտգենյան դիֆրակցիա. նոր միջոց հնամենի նյութերի արտադրության տեխնոլոգիական հետազոտությունում», Իեն Լինդսեյ (*Պուրդուի Համալսարանի Մարդաբանության բաժին, ԱՄՆ*)՝ «Գեոֆիզիկայի և ICP-MS տեխնիկայի կիրառությունը ուջբրոնզեդարյան ամրոցներ հնավայրերի ուսումնասիրությունում, Ծաղկահովտի հարթավայր»:

Գիտաժողովի «Հասարակական գիտությունների դաշտային հետազոտությունների մեթոդաբանություն և էթիկա. տեսություն և փորձ» խորագրով մասը կայացավ դեկտեմբերի 16-ին: Բացման խոսքով հանդես եկան ինստիտուտի ԵԳԽ փոխնախագահ Համլետ Մելքումյանը և Արդիականության ազգաբանության բաժնի վարիչ Լևոն Աբրահամյանը: Լ. Աբրահամյանի ելույթն ուներ «Հետազոտողը դաշտում. հարց և պատասխան» խորագիրը:

Ներկայացվեցին զեկուցումներ՝ հետևյալ թեմաներով. Նվարդ Վարդանյան (*ՀԱԻ, Բանագիտության բաժին*)՝ «Բանահավաքչության մեթոդաբանության որոշ արդի հիմնախնդիրներ», Ալինա Պողոսյան (*ՀԱԻ, Ազգագրության բաժին*)՝ «Արդեն տրվածը» հասարակական գիտությունների ուսումնասիրություններում. լեզվի և տարածված դիսկուրսների ազդեցությունը դեռ չսկսված հետազոտության վրա», Լևոն Մարգարյան (*ՀԱԻ, Ազգագրության բաժին*)՝ «Հայաստանում ռոք ենթամշակույթի ուսումնասիրության մեթոդաբանական խնդիրները», Ջոն Վիլկինզ (*Թյուբինգենի համալսարան, Գերմանիա*)՝ «Հանդիպել օտարին և լինել օտար», Ռուզաննա Ծատուրյան (*ՀԱԻ, Ազգագրության բաժին*)՝ «Հայկական խոհանոցի հանրային դիսկուրսն ու ազգագրագետը», Վահե Բոյաջյան (*ՀԱԻ, Արդիականության ազգաբանության բաժին, Սոցիալական մարդաբանության բաժին, Մենթ Էնդրյուսի համալսարան, Շոտլանդիա, Մեծ Բրիտանիա*)՝ «Մարտահրավերներ և հնարավորություններ. հետազոտական ճկունությունը դաշտային աշխատանքներում (*Բալուչիստանի Մարհադդի շրջանի օրինակով*)», Արզամ Երանոսյան, Սաթենիկ Մկրտչյան՝ «Կովկաս, Կոնֆլիկտ, Մշակույթ» նախագծի (*DAAD*) ուսանողական ծրագրերը», Համլետ Մելքումյան (*ՀԱԻ, Արդիականության ազգաբանության բաժին*)՝ «Քաղաքացին և հետազոտողը

«Մաշտոցի պուրակում» (հանրային տարածքների պահպանության քաղաքացիական շարժումների ուսումնասիրության փորձ), Սաթենիկ Մկրտչյան (ՀԱԻ, Էթնոսոցիոլոգիայի բաժին)՝ «Ազգագրագետը դպրոցում. ոչ ֆորմալ պրակտիկաների ուսումնասիրության, արդյունքների ձևակերպման և հրատարակման խնդիրները», Սմբատ Հակոբյան՝ «Ամերիկյան մարդաբանական ասոցիացիայի էթիկայի կոդեքս, Լ. Շտեռներգի «ազգագրագետի 10 պատվիրանները»:

Զեկուցումներից հետո տեղի ունեցավ քննարկում՝ «Մասնագիտական էթիկայի նորմերու կոդեքսներ. հայաստանյան իրողությունների տեղայնացման խնդիրները» թեմայով:

Որոշ զեկուցումներ ներկայացվեցին՝ (հեղինակների ֆիզիկապես ներկա լինելու անհնարինության պատճառով) օգտագործելով ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցների ընձեռած հնարավորությունները: Նրանք կարողացան ելույթ ունենալ, նաև՝ ունկնդրել իրենց գործընկերներին: Գիտաժողովի մասնակիցների միջև տեսա- և ձայնակապ ապահովելու համար օգտագործվեցին Skype-ը և Google+ Hangouts-ը: Միաժամանակ ապահովված էր ուղիղ կապով հեռարձակում՝ Ustream և Livestream ինտերնետային միջոցներով:

ՌՈՍԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ,
ՍԱԹԵՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ,
ՀԱՄԼԵՏ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ